ՀԱՅ—ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Համազգային Տօնը. — Գրոց գիւտի և տպագրութեան յոբելեանին հանդէսներուն համար պատրաստութիւններ կ'տեսնուին Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ: Կեդրոնի յանձնաժողովին կողմէ ամէն կողմ ղրկուելիք զարդանկարները և ուրիշ նպաստի յատկացեալ առարկաները վաճառուելու կերպով պատրաստուած ըլլալով, այս օրերս պիտի ղրկուին թաղերը, կատարուելիք հանդէսներուն մէջ անոնցմով ժողովրդեան նուէրները ստանալու համար: Վարչութեան որոշմամբ Մայր եկեղեցիէն Բերա ուղղուելիք թափորը ջնջուած է, բայց թաղերու մէջ կազմուած կարգադիր մասնախումբեր գեղեցիկ մտածումը ունեցած են շաբաթ գիշեր լուսազարդել եկեղեցիները և վարժարաններու դուռները: Երուսաղէմի Պոլսոյ փոխանորդն ալ նոյն գիշերը պիտի լուսազարդէ ամբողջ շէնքն և հայկական դպրութեան ու գրականութեան ծառայութիւն մատուցանող Էջմիածնայ Կաթողիկոսներու և Երուսաղէմի և Պոլսոյ Պատրիարքներու լուսանկարները պիտի երեւին շէնքին ճակատը, դրօշակներով, վերտառութիւններով և հայկական այբուբենը ներկայացնող տառերով:

Ինչպէս յայտնի է, այս մեծ յոբելեանին կ'մասնակցին Հայութեան գլխաւոր մասէն զատ նաև Հայ-հռոմէականներ և Հայ բողոքականներ միևնոյն եռանդով, որովհետև անոնք ալ հաւասարապէս օգտուած են հայ գրականութենէն և հայ դպրութենէն, բայց մանաւորապէս Հայ-հռոմէական կղերը՝ կրկին Մխիթարեան միաբանութեան անդամներով չէզոք կը մնայ, որովհետև Թերզեան պաշտօնանկ պատրիարքը, որ իր հոգևոր իրաւասութիւնը կ'պահէ, բանադրանքի և կախակայութեան սպառնալիքի տակ ճնշած է զանոնք: Բայց որովհետև Մխիթարեանց հայ դպրութեան և գրականութեան ծառայութիւնը ծանօթ է ամբողջ ազգին, յոբելեանական յանձնաժողովին ատենապետ Տքթ. Թորգոմեան էֆ. բոլորովին ինքնագլուխ, առանց երբեք մէկու բան մը ըսելու, այլ պարզապէս իյնալով Մէնէվիշեանի կողմէ սարքուած ծուղակի մը մէջ, մտածումն ունեցեր է այդ կէտերը զգացնել Թերզեանի և առաջարկել որ արգիլք չըլլայ Մխիթարեանց մասնակցութեան, այս զուտ գրական և ազգային հանդէսին:

Այս դիմումը տեղի ունեցեր է և Թերզեանի կողմէ մերժողական պատասխան ստացուեր է այն առարկութեամբ որ «Հայ հռոմէական համայնքին համար սգոյ օրեր են այս օրերը և ներելի չէ խրախճանութիւն կատարել»: Սակայն աւելի լաւ կ'ըլլար, երբ ըսուէր թէ համայնքին իր հայրենի աւանդութիւններէն և ազգային զգացումներէն օտարացնելու համար թափուած ջանքերու օրեր են և ներելի չէ ազգային զգացումները հրահրող ձեռնարկներ կատարել: Սակայն Թերզեանի մօտ այս դիմումը կատարել տուող Մէնէվիշեան ըսեր է ծանօթ Հայ ազգայինի մը. «Մենք արդէն ոտք չենք կոխեր Հայ Եկեղեցի, բայց քանի որ շաբաթ և կիրակի պատարագ պիտի մատուցուի, բնաւ չենք կըրնար եկեղեցի մտնել»: Հետեւաբար, աւելորդ կ'ըլլայ Մխիթարեանց համար դիմում կատարել: Հակառակ ասոր, Պոլսոյ զանազան թաղերու կարգադիր մասնախումբերու մէջ, Հայ-հռոմէական ազգայիններ եռանդով կ'աշխատին: Ցոբելեանի օրը Բերայի Ս. Գ. Լուսաւորիչ ուսումնարանին մէջ գրական հանդէս մը տեղի պիտի ունենայ, բայց մի միայն աշակերտաց համար:

Ազգ. Ժողովէն արտօնութիւն ուզուած ըլլալով տրամադրելու ժողովասրահը Կեդրոնական վարժարանի աշակերտաց համար, հինգշաբթի օր գրական հանդէս մը տեղի պիտի ունենայ այնտեղ աշակերտաց կողմէ:

⁂ Ազգ. Վարչութիւնը՝ Ցոբելեանական յանձնաժողովին անդամ ընտրած էր Հայ—հռոմէական երկու ծանօթ անձնաւորութիւններ, իբրև պաշտօնական ներկայացուցիչ Կաթոլիկ համայնքին. Նոյնպէս՝ Ցանձնաժողովին ատենապետը Թերզեանի մօտ գացեր է, ինչպէս գրած ենք քիչ մը վերը: Թէ՛ այս վերջին դիմումը և թէ Հայ կաթոլիկ անդամներուն ընտրութեան եղանակը մեծ ցաւ պատճառած են Հայ—հռոմէականաց, և կատարելապէս իրաւունք ունին: Հայ—հռոմէական համայնքին պաշտօնական ներկայացուցիչ ըլլալիք անձերն ո՛չ թէ մեր Վարչութիւնը, այլ նոյն համայնքին Վարչական Խորհուրդը պէտք է ընտրէ, ապա թէ ոչ Ցանձնաժողովին հրաւիրուած նոյն անդամները անհատաբար միայն կրնան մասնակցիլ. ինչպէս որ՝ եթէ Հայ Կաթոլիկները իրենց մէկ տօնախմբութեան ուզէին որ Հայ ազգը մասնակցէր, մեր Վարչութիւնն ինք պիտի որոշէր ազգին ներկայացուցիչները: Այսօր Թերզեան պաշտօնանկ է, և Պատրիարքարանին իրաւասութիւնը կ'մարմնացնէ Վարչական Խորհուրդը: Անշուշտ այս բաները գիտէ մեր Վարչութիւնը, և որչափ ալ եղածին մէջ դիտում չըլլալուն վստահ ենք, բայց Հայ-հռոմէականք վշտանալու իրաւունք ունին: Ազգ. Վարչութիւնն առաջին անգամ չէ որ այս սխալը կ'գործէ: Ասկէ առաջ ալ ինքնագլուխ՝ Այրիախնամի անդամ ընտրած է Հայ-հռոմէական անդամներ, մինչդեռ պէտք է Վարչական Խորհուրդին յանձնէր այս ընտրութիւնը:

Ամենէն զարմանալին՝ Թերզեանի մօտ եղած պաշտօնական դիմումն է: Թերզեանը հրաժարեցուցուած է, և Հայ Հռոմէականաց մղած այս արդար պայքարին առաջին համակիրները Հայերը եղան: Ինչպէս կ'ըլլայ որ զանիկա Յանձնաժողովը փաստ մը կ'տրուի, դիմում ըլլալով իր մօտ, մինչդեռ անտես կ'առնուի Վարչական Խորհուրդը: Շա՛տ անմիտ գտնուեր է Թերզեան, գրկաբաց չընդունելով այս հրաւէրը: Այսքան ատենէ ի վեր կարօտը կ'քաշէ ձայնաւոր պատարագի և ահա իր անունը յիշատակել տալու առիթը ոսկով կուգար: Բայց Հայ Հռոմէականք թոյլ պիտի տային որ առիթը չահագործէր. Ինչ նպատակով ուրեմն դիմում եղած է իր մօտ, մանաւանդ թէ Ցանձնաժողովին ատենապետը նախապէս գիտէ եղեր որ Թերզեան կ'մերժէ, բայց դարձեալ ինք գացեր է և միևնոյն պատասխանը առեր է: Հայ Հռոմէական պաշտօնական շրջանակները ու ժողովուրդը այնքան զգածուեր են որ՝ մինչդեռ կ'պատրաստուէին իրենց Պատրիարքարանին դահլիճին մէջ պաշտօնական ընդունելութիւն կատարել նոյն օրը, և այս առթիւ հրաւիրագիրներ պիտի ուղղուէին, բայց զանց առած են, ու պիտի բաւականանան Ս. Լուսաւորիչ վարժարանին մէջ հանդէսով մը: Այս ալ իր կարգին ծայրայեղութիւն է, որովհետև կարելի է վշտանալ Վարչութեան, բայց Ս. Սահակ-Մեսրոպի քէն ընել՝ չենք ըմբռներ:

Երուսաղէմի գործերը.— Երէկ Հոկտ. 5 թուականով Երուսաղէմէն հետեւեալ հեռագիրն ուղղուած էր խմբագրութեանս.

«Թերթերէն տեղեկացանք թէ Ազգ. Ժողովը վանքին համար նոր կանոնագրի մը պատրաստութեան ձեռնարկած է. Այս ձեռնարկը բոլորովին կ'հակառակի ժողովին կողմէ հաստատուած եւ երկար տարիներէ ի վեր գործադրութեան մէջ գտնուած կանոնագրին 85րդ յօդուածին տրամադրութեան. Այս մասին արդէն Միաբանական Ժողովը 15 Մարտ 329 թիւին եւ 210 թուահամար գրութեամբ եւ յատուկ հեռագրով իր առարկութիւնները ներկայացուցած է, բայց ցաւօք կ'տեսնենք թէ նկատողութեան չեն առնուած. Միաբանական ընդհանուր ժողովը իր Հոկտ. 2ի նիստին մէջ, նկատելով որ ի բացակայութեան Պատրիարքի եւ Պատրիարքական աթոռոյ թափուր գտնուած միջոցին, ոչ ոք իրաւունք եւ ձեռնհասութիւն ունի ձեռնարկելու կանոնագրի փոփոխութեան եւ այդ փոփոխեալ կանոնագրի գործադրութեան եւ այս պարագան կախում ունի Պատրիարքին ներկայութենէն, հետեւաբար որոշեց խնդրել որ առաջին առթիւ ձեռնարկուի Պատրիարքի ընտրութեան եւ անոր հետ խորհրդակցութեամբ, ազգին շահուց համապատասխան կերպով վանքին վիճակին բարելաւման հոգ տարուի. Հակառակ պարագային՝ նկատելով որ նոր կանոնագիրը պատրիարքական արտօնութիւնները եւ մեր ազգային ու վանական իրաւունքները բոլորովին ջնջելու կ'միտի, նոյն կանոնագրին ընդունելութեան եւ գործադրութեան մասին բացարձակապէս ո՛եւ է պատասխանատուութիւն չենք ստանձներ.

Միաբանական ժողովոյ դեր—ատենապետ
ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Փոխանորդ ՍԱՐԳԻՍ Վ., Անդամք Տնօրէն
Ժողովոյ՝ ԱՀԱՐՈՆ Վ., ԴԱՒԻԹ Վ.,
ՎԱՀԱՆ Վ. եւ ԱԹԱՆԱՍ Վ..

Ծ. Խ.—Այս հեռագիրը կ'հասնի այնպիսի ատեն մը, երբ կեդրոնին մէջ վանական կանոնագրին ընդունուած յօդուածներու գործադրութեան համար ձեռնարկներ կ'ըլլան ու այդ նպատակաւ Խնամակալութիւն մը կ'կազմուի: Այս բողոքն ու ընդդիմութեան ցոյցերն արդար ըլլան գուցէ, քանի որ կեդրոնը տակաւին տկար կ'գտնուի հանդէպ քանի մը գլխաւոր պարագլուխներու, որոնք վերջին անգամ Ազգ. Վարչութեան պատուիրակին վրայ ձեռք բարձրացուցին և Տեղապահը վտարեցին վանքէն: Արդեօք միաբանական այն կանոնագիրը, որ ի գործադրութեան կ'գտնուի, այսպիսի տրամադրութիւններ ունի՞ իր մէջ: Ազգ. Ժողովի վերջին նիստին Խօճասարեան էֆ. ըսաւ որ Ազգը Խրիմեանի ու Վարժապետեանի նման Պատրիարքներու օրով Կիլիկիոյ Կաթողիկոսն ու առաջնորդներ Պոլիս բերած է. բայց խնդիրը հոն է որ այսօր մասնանիւ եղած մէկ քանի միաբաններ վանքէն դուրս չեն հանուիր, թուղթի վրայ գտնուած կանոններ և ծրագիրներ ի՞նչ օգուտ ունին երբ անգործադրելի թողլով ասոր անոր ծիծաղին պատճառ պիտի ըլլան:

Այս վիճակին առջև Վարչութիւնը այլ ևս վայրկեան մը պէտք չէ յապաղի իր պաշտօնը գործադրելու մէջ: Արդէն հակառակ Տեղապահ Ս. Եպիսկոպոսին հեռագրական հրահանգին, երեք սարկաւագներ ալ վարդապետ ձեռնադրուած են ու ասոնք այնպիսի մարդեր են, որոնք ամենէն առաջ պէտք է վտարուէին վանքէն՝ փոխանակ աստիճանի բարձրացում ձեռք բերելու: Նախ և առաջ հարկ է այս կացութիւնը ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետին և ապա խորհիլ այն միջոցներուն վրայ, որոնցմով կարելի կրնայ ըլլալ վերջ տալ այս անկերպարան և ծիծաղելի կացութեան:

Օսմ. Խորհրդարանին Երեսփոխանական մօտաւոր ընտրութեանց պատճառաւ, շաբաթ օր Վարչութեան ներկայացուցիչները խորհրդակցութիւն մը կատարեցին Ղալաթիոյ Խորհրդարանի և որոշեցին որ դիմում մը կատարուի իմանալու համար թէ ինչ պիտի ըլլայ Ազգին ներկայացուցիչներուն թիւը յառաջիկայ ընտրութեան մէջ: Կ'առաջարկուի պահանջել նախ որ ազգն իր ընտրելիներն ինք ցոյց տայ: Վերջին երկու երեսփոխանական ընտրութիւններուն առթիւ ազգն իր մէջ այնչափ անկանոնութիւն տեսաւ որ նախ և առաջ անոնք ուղղել կարեւոր է: Ընտրութեան լուրերուն հետ նորէն այդ հին ձեւերը երեւան եկան: Ցանուն ազգին այս խնդրոյն վրայ խօսելու, բանակցելու իրաւունքը ո՞ւր կ'վերաբերի. Նախ ատիկա ճշդել կարեւոր է:

Ատը. Պալուոյ առաջն. փոխանորդ Տ. Արսէն քհ. Դերձակեան Պոլիս եկած և Վարչութեան ներկայացած է, տեղւոյն բանտարկելոց խնդրոյն համար:

Գաւառէն, Չարաբերինը.—Վան-Տոսպի մէջ կը կարդանք.—«Ամսոյս 16ի գիշերը Աւարքի Աւագ քհնյ. Ծանիկեան, երբ գիշերանց եկեղեցին կուգայ, եկեղեցիէն քիչ հեռու արտին քով յարձակում կ'կրէ երկու չարագործներէ, որոնք չարաչար կ'ծեծեն զինք ու կ'փախչին: Մեր ցաւակցութիւններն յիշեալին յայտնելէ յետոյ կ'յայտնենք մեր զզուանքը ոճրագործներուն: Կ'լսենք թէ իր պարագաները խօսած են որ կ'ճանչնան չարագործները, կ'պահանջենք որ փութով երեւան հանեն անունները, որպէս զի հասարակութիւնն այդ հերոսներն (! !) իրենց արժանի անարգանաց աթոռին վրայ դնէ:

«Ամսոյս 17ին Վանայ Ազգ. դպրոցներու ուսուցիչներէն 40 հոգի, Հայկ. Կեդր. վարժարանի մէջ ժողով մ'ունեցան խորհրդակցելու համար, Հայ գրերու գիւտի 1,500 և Հայ տպագրութեան 400ամեակի կրկնակ յոբելեաններուն պատշաճ կերպով մասնակցելու մասին: Կարծիքներու փոխանակութենէ յետոյ ժողովն հետեւեալ որոշումները կուտայ:

Ա. Նոյն օր կազմել՝ համադպրոցական հանդէս մը: Բ. Կազմել ժողովրդական հանդէս մը: Այս կրկնակ հանդէսներուն ծրագիր մը կազմելու համար, Ազգ. և Միսիոնարական վարժարաններու պաշտօնեաներէն խառն յանձնախումբ մը կազմուած է. ծրագիրն ի վերջոյ պիտի ենթարկուի ընդհ. ուսուցչական ժողովի նկատառութեան և վաւերացման:

Վանի կուսակալութիւնը Բ. Դուռ հեռագրեր է երէկ. —«Միր Մհէի ընկերներէն հրոսակ Բաքանցի Մէհմէտ օղլու Տէրզար և մօրաքրոջ որդին Մուսա կնոջ կերպարանքով կարասի մը մէջ Խալիլ և Ճէվտէթ պէյերու կողմէ ողջ ձերբակալուած են: Զանոնք պահող Ահմէտ և Սաֆուպ նոյնպէս ձերբակալուած են: Այս վերջիններուն տունէն գտնուած են ատենին գողցուած շատ մը ապրանքներ: Լըսուած ըլլալով որ սպաննուած Միր Մհէի ընկերներէն Նուրի և իր չորս ընկերները կէս վիրաւոր վիճակի մէջ Ղուխուի գիւղը հանդիպած են, անոնց դէմ զինուոր ղըրկուեցաւ:»

Պայազիտէն Պատրիարքարան ուղղուած Սեպտ. 25 թուականով պաշտօնագրէն քաղուած. — Թէ՛ ընդարձակ տեղեկագրութեամբ և թէ հեռագրերով պարզած եմ թէ ոճիրները կ'շարունակուին, թէ Քիւրտերը զինեալ վիճակի մէջ կ'գըտնուին, իսկ Հայերուն զէնքերը կ'հաւաքուին: Ամէն կողմ յուսահատութիւն կը տիրէ, մէկ տարուան ընթացքին մէջ 12 Հայ աղջիկներ բռնաբարուեցան: Քիւրտեր ու զինեալներ կ'քաջալերուին իրենց չարագործութիւններուն մէջ: Կառավարիչը Պատրիարքարանի ուղղած մեր հեռագրերուն նկատմամբ իր Ս. քարտուղարին միջոցաւ պատուաւոր Հայերու իմացնել կուտայ թէ «Անօգուտ են այդ դիմումները, թէ ամէն բան իրմէ և կուսակալէն կ'հարցուի, թէ կուսակալը կ'սիրէ զինքը և հետեւաբար խնդիրներն իր ուզած ձեւով կ'ներկայացնէ կեդր. կառավարութեան, ուստի ձեր դիմումները անկարեւոր պիտի դառնան, և այլն»:

Տեղւոյս մարդահամարի պաշտօնեան և Համիտիէի հրամանատար Օսման պէյ, Համիտիէի քննիչ Էմին փաշայի հրամանով Քիւրտերու ամբողջ մարդահամարը կ'կատարեն, որոնք նոյն փաշային քաջալերութեամբ կ'զինուին, ու շատեր հանգիստ իրենց տունը նստած ամսական կ'ստանան, մինչդեռ Հայէն զինուոր կ'առնուի, և մինչև Պաղտատ ու Մուսուլ կը ղրկուի և ասոր փոխարէն Հայն է որ կ'սպաննուի, Հայն է որ կ'կողոպտուի, Հայուն աղջիկն ու կինն է որ կ'յափշտակուին և Հայուն հողն է որ կ'գրաւուի: Պայազիտ միայն վեց Հայ ոստիկան ունի 300 Թուրք ոստիկանի մէջ, բայց կ'աշխատուի նոյն իսկ զանոնք մէկ մէկ պատճառով հեռացնել. ամբողջ պաշտօնէութիւնը վատ աչքով կ'նայի Հայուն, ինչ որ աւելի կ'ծանրացնէ Հայերուն կացութիւնը:

Մանթաշեան եղբայրները իրենց մօր յիշատակը յաւերժացնելու համար 10,000 րուբլի նուիրած են Լազարեան ճեմարանին, հանգուցեալին անունով թոշակաւոր աշակերտներու տեղ հաստատելու համար:

Բրոֆ. Սթրժիկովսքիի Հայկական ուսումնասիրութիւնները. — Կովկասի լրագիրները կ'ըսեն թէ Վիեննայէն բրոֆէսէօր Եոզէֆ Սթրցիկովսքի, որ բիւզանդական ու արեւելեան արուեստներու հմուտ գիտուն մ'է, վերջերս ռուսական Հայաստան գտնուեցաւ Երևանի մէջ ուսումնասիրելու Հայկական զարգացած հին քաղաքները: Հայկական արուեստի բազմաթիւ յիշատակարաններ գտաւ հոն: Բրոֆէսէօրը Հոկտ. 7ին (Ն. Տ.) Թիֆլիսի Հայկական քլիւպին մէջ գերմաներէն հրապարակախօսութիւն մը ըրաւ իր աշխատութեանց արդիւնքին վրայ, որուն մասնակցեցաւ Թորամանեան Հայ ճարտարապետը: Բրոֆէսէօրն ըսաւ թէ եւրոպական ճարտարապետութեան սկզբնաւորութիւնը Յունաստանի կամ Հռոմի մէջ պէտք չէ փնտռել, այլ Ասորեստանի և Հայաստանի մէջ: Բրոֆէսէօրը Հոկտ. 11ին միևնոյն հրապարակախօսութիւնն ըրաւ Պաքուի մէջ:

ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ
ՏԱՐԻՈՅՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ

Մօտ օրէն հրապարակ կ'ելլէ **ԹԷՈԴԻԿԻ 1914Ի ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ** որ վերջացող տարւոյն ամենագեղեցիկ անակնկալը պիտի ըլլայ ու պիտի դղրդէ գրական հրապարակը իր աննախընթաց կերպով ճոխ բովանդակութեամբը, բազմաթիւ նորանոր պատկերներովը, նիւթերու պէսպիսութեամբը, մանաւանդ 1914ի այս տարեցոյցին արդի հրատարակիչ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆի գեղարուեստական տպագրութեամբը. Մէկ խօսքով, գործին կրկնակ շքեղութեանցը համար ոչինչ խնայած են հեղինակ եւ հրատարակիչ. Այս անզուգական հատորին մէջ ծանուցում ընել փափաքողներ թող փութան խելոյն գիրքը հրապարակ չելած. Ծանուցարութեանց եւ ամէն տեսակ գրութեանց համար միակ հասցէ. 3—1

Théotig, c/o M. Hovaghimian
Tchakmakdjilar, Cons/ple.